Վլադիմիր Ժիրինովսկին երկու դիմակով՝ հայերի դեմ եւ հայերի օգտին

Ինչպես հայտնի է մամուլից եւ հեռուստատեսային հաղորդումներից, ԽՍՀՄ լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ Վ. Ժիրինովսկու անունը ՌԽՖՍՀ ժողպատգամավորների համագումարում մտցվեց գաղտնի քվեարկության ցուցակներում որպես պրեզիդենտության թեկնածու: Ժիրինովսկու ելույթն ու հարցերի պատասխանները մի կողմ թողնելով, կանդրադառնանք հայ եւ վրացի ժողովուրդների դեմ ուղղված «խոսքերի» պարզաբանմանը:

Իր ելույթում պարոն Ժիրինովսկին ասաց հետեւյալը. *«Երբ վրաց թագավորը այստեղ ուղարկեց պատվիրակություն, Վրաստանը օտարերկրյա զավթիչներից հեղեղվել էր արյան ծովում: Գեորգյան տրակտատում գրված է. «Միշտ Ռուսաստանի հետ»: Դա Վրաստանն էր խնդրել: Իսկ այսօր նրանք մեզ մերժում են: Այսօր «Անդրկովկասյան զինվորական օկրուգի զորքերն այնտեղ զավթիչներ են»: Եթե այնտեղ մենք չլինենք, չէր լինի նաեւ Վրաստանը: Չէր լինի նաեւ աշխարհի քարտեզի վրա Հայաստանը: Ես դա հայտարարում եմ որպես արեւելագետ: Թուրքիայի եւ Իրանի բանակների գլխավոր քարտեզների վրա չկա Վրաստանը: Այնտեղ այդ բոլորը նշված են որպես Թուրքիայի եւ Իրանի ծայրամասային շրջաններ: Եւ այնտեղ գրված է ոչ թե «Բաքումի», այլ՝ «Բաքում-կալե», «Սուխում-կալե»: Սակայն, քանի որ այնտեղ կանգնած են խորհրդային զորքերը, ուստի գոյություն ունեն Հայաստանը եւ Վրաստանը: Բայց ահա՛ ձեզ մոտիկ եղբայրների շնորհակալությունը»:* Իհարկե, Ժիրինովսկու ելույթը շատերը քննադատեցին, նաեւ հայազգի ժողպատգամավոր Ե. Համբարձումովը, սակայն մեզ հետաքրքրում էր Ժիրինովսկու անձնական մեկնաբանությունը: Այդ հարցով էլ «Ազգ»ի անունից դիմեցինք պրեզիդենտության թեկնածուին: Բառացի նա պատասխանեց հետեւյալը. *«Ես Հայաստանի կողմն եմ: Հարց չկա: Ես չեմ տատանվում: Հայաստանի ջերմ կողմնակիցն եմ: Ես կդադարեցնեմ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ընթացող պատերազմը: Ես, ընդհանրապես, սիրում եմ Հայաստանն ու Վրաստանը: Ինձ ուղղակի ճիշտ չհասկացան: Ես սիրում եմ քրիստոնյա ժողովուրդներին»:* Թեկնածուն շատ էր շտապում, ուստի ես չկարողացա հայտնել, թե ո՞րն է կոնֆլիկտի լուծման նրա ծրագիրը: Իսկ ինչ վերաբերում է նրա փոփոխական պատասխանների բնույթին, այն թողնում ենք ընթերցողներին, ասվածից ինքնուրույն եզրակացություններ անելու: □